

Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՈՎՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 41, 42-Ա-44-Ա, 45-Ն, 46-Ն ԵՎ 47 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ թիվ 42-Ա-44-Ա և 45-Ն որոշումների նախաբաններում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին հղում կատարելու անհրաժեշտություն չկա:

Թիվ 43-Ա որոշման նախաբանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետին կատարված հղումը սխալ է, քանի որ նշված օրենքը պարունակում է ընդամենը 46 հոդված:

Որոշմամբ հաստատված հավելվածում «Աշխատակազմի քարտուղար (1.2-1)» տողի «Պաշտոնային դրույքաչափը (դրամ)» սյունակում նշված «140000» թիվը փոխարինել «154000» թվով, «Գծային էլեկտրիկ» տողի «Սահմանված դրույքաչափը (դրամ)» սյունակում՝ «45500» թիվը՝ «45000» թվով: Բացի այդ, «Գրադարանավար», «Հավաքարար» և «Գծային էլեկտրիկ» տողերի «Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)» սյունակում նշված տոկոսաչափերը համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սխալ են հաշվարկված:

«Պաշտոնային դրույքաչափը (դրամ)» սյունակի «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում ընդհանուր գումարը նշված չէ: «ԸՆԴԱՄԵՆԸ» տողի «Սահմանված դրույք», «Սահմանված դրույքաչափը (դրամ)» և «Ընդամենը» սյունակներում նշված «10.75», «981500» և «1502.0» թվերը չեն համապատասխանում յուրաքանչյուր տողերի թվերի հանրագումարին:

Թիվ 44-Ա որոշման նախաբանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետին կատարված հղումը սխալ է: Հղումը կատարվել է ուժը կորցրած ճանաչված իրավական ակտին:

Որոշմամբ հաստատված հավելվածի վերևի աջ անկյունում գրառված որոշման հերթական համարն անհասկանալի է: Բացի այդ, հավելվածի «Հաշվապահ», «Քանոնահար», «Դաշնակահար», «Տնտեսվար» և «Հավաքարար» տողերի «Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)» սյունակում նշված տոկոսաչափերը համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սխալ են հաշվարկված:

Թիվ 45-Ն որոշման հերթական համարը ջնջված է: Բացի այդ, որոշման և որոշման հավելվածի հերթական համարները տարբեր են գրառված:

Որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունում «դեպքում» բառից հետո նշված «Մինչև» բառը հանել: 9-րդ կետի 2-րդ ենթակետում «Քսանվեց հազարից դրամ» բառերը փոխարինել «Քսանվեց հազար դրամ» բառերով: 11-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերի համար տեղական տուրքի դրույքաչափեր սահմանված չեն: 16-րդ կետով սահմանված տեղական տուրքի դրույքաչափում «հազար» բառից հետո նշված «հազար» բառը հանել:

Որոշմամբ սահմանված N 2 հավելվածի 7-րդ կետը սխալ է համարակալված: Բացի այդ, 7-րդ կետի 1-ին ենթակետում հարկավոր է կիրառել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, իսկ 7.3-րդ կետում՝ 14-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված վճարներից միայն մեկը:

Թիվ 46-Ն որոշման 2-րդ կետում համայնքի մատուցած ծառայության գումար սահմանվել է անորոշ ժամանակի համար:

Թիվ 47 որոշումը պարունակում է նորմատիվ բնույթի դրույթներ, հետևաբար որոշման հերթական համարից հետո անհրաժեշտ է գրառել «Ն» տառը:

Որոշումներում տեղական ինքնակառավարման մարմնի անվանումն անհրաժեշտ է գրառել ամբողջությամբ:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան
03.02.2020թ.